բելով ճրլրծուկի[20] ցողունները կամ վրսի փշոտ թփի կամ ցրտնու ջարդած ճյուղերը։ Այդ խարույկից վառած մոմերը կամ ցողունները զգուշությամբ տանում էին տուն, այնպես, որ առանց հանգչելու հասցնեին տեղ և այնտեղ նրանով վառեին ճրագը կամ թորէնի կրակը։ Պառավները նրանով խանձում էին հավերի հետույքները, որ առատ ու խոշոր ձու ածեն, կամ նույն նպատակով բերում էին խարույկի մոխիրն ու հավերի տակ բների մեջ փռում։ Փռում էին մոխիրը նաև կովերի տակ, երբեմն բերած ցողունի ծխով մխոտում էին կովերի ծծերը, որ առատ կաթ տան։ Խանձված ճիպոտնէրը կախում էին խնոցու վրա, որ նրա մեջ հարվող մածունից ավելի շատ կարագ դուրս գա։ Խանձված ճիպոտը պահում էին մինչև Զատիկ՝ բնության վերջնական արթնացման օրը, նրա վրա զատկական թանէսպասը եփելու համար, որ նրա զորությունն ավելի ազդի հաջորդ ժամանակաշրջանի առատության վրա։ Մոխիրը ցանում էին արտերում կամ ծառերի արմատների մոտ՝ առատ բերքատվություն առաջացնելու համար։ Դիտում էին, թե խարույկի ծուխը ո՞ր կողմն էր ուղղվում՝ այն կողմի արտերից սպասվում էր առատ բերք։ Մի քանի գյուղերում եկեղեցու կրակով վառում էին նաև իրենց կտուրներին դիզած առանձին խարույկները և ինչպես եկեղեցու բակի, նույնպես այդ տնային խարույկների վրայով ցատկում էին ջահելները, իսկ նորապսակները պտտվում էին շուրջը՝ անշուշտ նպատակ ունենալով իրենց սեռական ունակությունը դրանով զորացնել։ Ցատկում էին նաև չբեր կանայք։

Դրդդարանչի օրն ընդհատվում էին բոլոր քրռասօնքնէրը, թե՛ նորապսակ զույգերի և թե՛ ծննդկան կնոջ։ Այդ օրից մինչև Զատիկ պսակ չէր լինում։ Թվում է, թե քառասունքների ընդհատումը և այնուհետև պսակի արգելումը մինչև բնության վերջնականապես արթնանալը ու զարթոնքը պետք է բացատրել այն երկյուղով, որ բնությունն այդ ժամանակամիջոցում ինքը բեղմնավորված լինելով՝ հղիացած է և քառասունքները կարող են այդ հղիացումը կոթէլ՝ խախտել, փչացնել։ Քրռասօնքավօրնէրը պղծված էին համարվում, առագաստի գիշերը՝ պղծության և մեղսագործության գիշեր էր։ Հետաքրքրական է, որ Ծննդյան պասին նախորդող ութօրյակումն էլ՝ օթէրէքին, պսակ չէր հասնում, մինչդեռ Նավասարդից հետո մինչ այդ ութօրյակը հարսանիքները թույլ էին տրվում։

Այս բոլոր սովորություններից ցցուն կերպով դրսևորված է այն, որ տաճարի կրակին վերագրվում էր չբերությունը վերացնելու, կաթը, ձուն, հացահատիկը առատացնելու զորություն։ Նրա բոցի մագիկ ազդեցությամբ նաև հաջորդ ժամանակաշրջանի արևի զորությունն է նույն ուղղությամբ արծարծվում և ավելացվում։

Այս ծիսական մանրամասնությունները ոչ մի կապ չունեն մանուկ Քրիստոսին տաճար տանելու պատմության հետ և մի ապացույց է, որ Տեառնընդառաջի անունը եկեղեցին բռնազբոսիկ կերպով կպցրել է հեթանոսական շատ հին տոնակատարությանը, որի դեմ պայքարելու ուժ չի ունեցել։

Սրփ Սարգիս։ Եղանակի այն փոփոխությունը, որը տեղի է ունենում Հայկական լեռնաշխարհում արթնացող, վերակենդանացող բնության առնչությամբ և արտահայտվում էր լեռներում սաստկացող քամիներով, իր կրոնական անդրադարձումը գտել է ս. Սարգսի տոնի սովորությունների մեջ։ Այս տո-

---

[20] Յուղատու բույս՝ դաշդա կտավհատ, Кашка Lalbemantia iberica—հատիկը սև, քթիկը սպիտակ։